ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.4-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մարտի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել 7 (յոթ) հայտ՝

- «ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի,
- «ՅՈՒՆԻՔ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 6 (վեց) կազմակերպության՝

- «ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ՅՈՒՆԻՔ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի կողմից:

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջված կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) ներկայացված չէ հայտում,

- 2-րդ ենթակետով պահանջված՝ Մրցույթի հրավերով նախատեսված պայմաններով մրցույթին մասնակցելու վերաբերյալ Հայտատու կազմակերպության իրավասու մարմնի որոշումը բացակայում է,

- 3-րդ ենթակետով պահանջված՝ Կազմակերպության փորձի նկարագրությունը, ներգրավվող մասնագետների տվյալները առկա չեն, իսկ կցված ինքնակենսագրականները ստորագրված չեն:

- **«ՅՈՒՆԻՔ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝**

հրավերի 2.4 կետի.

-3-րդ ենթակետին համապատասխան ներկայացված փաստաթղթերը չեն արտացոլում Հրավերի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջի (առնվազն երկու տարվա աշխատանքային գործունեություն) հավաստման փաստը:

-3-րդ ենթակետին համապատասխան ներկայացված ինքնակենսագրականները ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ չեն ներկայացված:

- **«ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

-1-ին ենթակետով պահանջված կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) ներկայացված չէ հայտում,

-3-րդ ենթակետին համապատասխան ներկայացված փաստաթղթերը չեն արտացոլում Հրավերի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջի (առնվազն երկու տարվա աշխատանքային գործունեություն) հավաստման փաստը:

-3-րդ ենթակետով պահանջված՝ ներգրավվող մասնագետների տվյալները, ինքնակենսագրականները առկա չեն:

- **«ԱՐԱՐԱ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

-1-ին ենթակետի պահանջը՝ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության) ժամկետի պայմանը պահպանված չէ:

- **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

-1-ին ենթակետով պահանջված կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) ներկայացված չէ հայտում,

-4-րդ ենթակետով պահանջված ճանաչողական այցերի ծրագրերի առաջարկը ամբողջությամբ չի ներառում 2.4.1-ին կետով սահմանված գործողությունները:

- **«Էլիտար» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

-4-րդ ենթակետով պահանջված ճանաչողական այցերի ծրագրերի առաջարկը ամբողջությամբ չի ներառում 2.4.1-ին կետով սահմանված գործողությունները և ստորագրված, կնքված չէ կամ ներկայացված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Մեկի՝

. **«ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն ընկերության կողմից ներկայացված կանոնադրությունը վերջին խմբագրությամբ տարբերակը չէ:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 6 (վեց) կազմակերպության՝

- «ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ՅՈՒՆԻՔ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի (*«ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի և «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից հավասար գնահատական են ստացել, որի արդյունքում հանձնաժողովն առաջնորդվեց առավել ցածր գնառաջարկ ներկայացրած ընկերությանը հաղթող ճանաչելու սկզբունքով («ԱՐԱՐԱ» ՍՊԸ՝ 68,266,200 (ներառյալ ԱԱՀ) և «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ՝ 64,943,200 (ներառյալ ԱԱՀ),

- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝

- **«ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ**-ն:

3. **Առաջարկել «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ**-ին՝ ներկայացնել ընկերության կանոնադրության վերջին տարբերակը: Միաժամանակ՝ առաջարկել ընկերությանը իր կողմից ներկայացված ֆինանսական առաջարկում ԱԱՀ գումարը ներկայացնել առանձին տողով:

4. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի** հետ՝ կազմակերպության կանոնադրության վերջին տարբերակը, ինչպես նաև շտկված ֆինանսական առաջարկը ներկայացնելու դեպքում:

5. Առաջարկը ընդունելու դեպքում մրցութային հանձնաժողովին՝ **մինչև 2025 թվականի ապրիլի 8-ը,** ներկայացնել կազմակերպության կանոնադրության վերջին տարբերակը:

6. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Դ.Կարապետյան	-	_____
Ա.Բաբայան	-	_____
Հ.Սահակյան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Զ.Հայրապետյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____